

ՀԱՐՄԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՇԱՐԺԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՃ
(Բանասիրական ուսումնասիրություն)

Ե. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կյանքի սկզբից մշտապես իրազեկում ստանալով շրջապատից՝ մարդու գիտակցության մեջ ձևավորվում են համապատասխան պատկերացումներ ու շահանիշներ առարկաների, երևույթների, հատկանիշների, գործողությունների վերաբերյալ: Շեղումներն այդ պատկերացումներից ու շահանիշներից բնականաբար ձևավորվում են իբրև տարօրինակություն, արտասովոր մի բան: Որքան մեծ է շեղումը, այնքան խորն է թողած տպավորությունը, այլ կիրպ ասած, զարմանքի զգացումը՝ թույլից մինչև զգայացունց լինելու աստիճանը: Այդպիսի իրազեկումներին մարդն արձագանքում, այսինքն՝ զարմանք է դրսևորում առավելապես հնչյունական լեզվով ու շարժասությամբ (ժեստիկուլյացիա): Առաջինի դեպքում զգացածն արտահայտում է նախադասություններով, միջարկություններով, բացականչություններով, ձայնի հնչերանգով. երկրորդի դեպքում՝ շարժումներով, շարժույթներով: Այստեղ մեզ հետաքրքրում է վերջինը: Զարմանքի պատճառ կարող են լինել զգայարանների, առաջին հերթին և ամենից ավելի տեսողության ու լսողության իրազեկումները, ապա նաև հայեցողական մտահանգումները, կոահումները: Եվ քանի որ պատճառներն ու պայմանները բազմաթիվ են ու բազմաբնույթ, տարբեր են նաև արձագանքման ձևերը շարժասությամբ՝ շարժանքներ, մարմնաշարժանքներ, կեցվածքներ, դիմախաղ, քայլվածք, որոնցից էլ գոյացել է խնդրո առարկա շարժասական հոմանիշային շարքը: Գարբերի ընթացքում, արձագանքելով զարմանքի աղբյուրին, շարժասողների (ժեստիկուլյացիային դիմողների) մոտ մշակվել են վարքի ձևեր՝ յուրաքանչյուրն իրեն բնորոշ շարժույթներով: Վարքի ձևերի համար սկզբնապատճառ է եղել կենսաբանական այս կամ այն պահանջմունքի բավարարման ցանկությունը: Սույն հոմանիշային շարքը քննության առնելու համար դասակարգենք անդամներն ըստ այդ վարքի ձևերի և անդրադառնանք ամեն մեկին առանձին-առանձին:

1. Շարժասողի բարձրացում տեղից: Տարօրինակին և արտասովորին արձագանքելիս՝ բնական պահանջ է առաջ գալիս ավելի շատ իրազեկում ստանալու: Այդ մղումով զարմացողը փոխում է մարմնի դիրքը, կամ մոտենում է օբյեկտին, լավ դիտելու, շփվելու, կարճ ասած, առավելագույնս քննալու: Համար: Սա վարքի հնագույն ձևերից մեկն է, որի շարժումները, շարունակական կրկնությունների հետևանքով, դարձել են ստերեոտիպ՝ վերածվել շարժույթների (կինեմա): Ներկայումս վերջիններս արտահայտում են մեկ ընդհանուր իմաստ՝ զարմանալ, և էական չէ, թե նախապես զգալության ո՞ր ձևին են ծառայել: Այսինքն, օրինակ, տեսողական իրազեկումից առաջ եկած շարժույթը, ավելի ուշ իբրև զարմանքի ստերեոտիպ, սկսում է գործածվել նաև լսողական իրազեկման դեպքում:

«Տեղից բարձրացում» վարքաձևի համաձայն. զարմանալիս շարժասողի

արձագանքում է հետևյալ շորս կերպ. եթե պառկած է, բարձրանում-հենկում է արմուկները վրա, կամ նստում է տեղում, եթե նստած է, տեղից վեր է կենում, կամ ոտքի է թռչում: Ընդգծված շարժումները տեղաշարժական հոմանիշային շարժումներ են: Կատարման տեխնիկայով ու ծավալով բերված խմբում առաջինը համեմատաբար փոքր մասշտաբի է ու պակաս եռանդուն: Ունի երկու տարբերակ: Մի դեպքում շարժասողը բարձրանում-հենկում է մեկ արմունկի (ՔԼի), մյուս դեպքում՝ երկու արմունկի (ՔԼի) վրա, ընդունում է կիսանստած կեցվածք, որը կարող է լինել տարբեր տևողության: Սովորաբար սա թույլ զարմանք առաջ բերող իրազեկման հետևանք է: Օրինակներ. «Չհեռագրե՞մ Տարասի կնոջը՝ գա:— Գծվե՞լ ես,— Լուսիկը արմունկը հենելով բարձին կիսանստեց» (Ա. Ստեփանյան): «Սեղրակը տեղյակ էր, Գևորգն էլ էր տեղյակ, Միխայիլն էլ... Հանկարծ ուստան հենվեց մի թևի վրա ու տեղից բարձրացավ.— Ի՞նչ բան է, հե՛շ մեկը չէ մնացե, բոլորն էլ մեռա՞ն...» (Մ. Արմեն):

Խմբի երկրորդ շարժումը կատարվում է եռանդագին. շարժասողը մի շարժումով նստում է պառկած դիրքից: Այս հանդամանքը մարմնաշարժանքը հնչյունական լեզվում արտացոլող բառակապակցություններում նկարագրվում է հետևյալ ձևերով. բարձրանալ-նստել, պառկած տեղից նստել, անկողնու մեջ նստել, վրա նստել: Ինչպես. «Շերամը ձգնեց տեսնել եղբոր դեմքի արտահայտությունը. «Իսկ գո՞րծ, էստեղ ո՞վ ինձ գործ կուտա... — ասաց երգիչը: Բաղդասարը նստեց անկողնում. — Չեղանք-չեղանք, էդքան է՞լ չեղանք, որ քեզի գործի դնենք: Թիֆլիսի կեսը գյումրեցի են» (Վ. Տալյան): «Լուսաղեմին ետ տարա մեր տան դուռը և ասացի ժպտալով. — Ծկել եմ:— Արմո ջա՞ն,— անկողնում վրա նստեց հայրս» (Հ. Մաթևոսյան): Բառակապակցությունների մեծ մասում ընդգծվում է շարժման կտրուկ բնույթը. վեր ցատկել նստել, թռչել տեղից նստել, միանգամից նստել, մի շարժումով նստել, վեր թռչել նստել: «Վա՛յ, թշվառական, արդե՞ն... ու զարմանքից վեր ցատկեցի՛ նրստեցի:— Արդեն... — քահ-քահ խնդաց» (Ա. Ահարոնյան): «Ստեփանը գլուխը կախեց:— Ես մեղավոր եմ, ես խաբել եմ քեզ, խաբել եմ բոլորիդ: Գառնիկը մի շարժումով նստեց անկողնի մեջ:— Այո,— շարունակեց Ստեփանը,— մի զարմանա...» (Հ. Ղուկասյան):

Խմբի երրորդ շարժումն է, ինչպես ասվեց, «նստած տեղից վեր կենալ»: Հնչյունական լեզվում մարմնաշարժանքն արտացոլող բառային միավորների մի մասում նկատելի է «կանգնել» բաղադրիչը՝ կանգնել, նստած տեղից կանգնել, ոտքի կանգնել, տեղը կանգնել, տեղից կանգնել, տեղում կանգնել: Օրինակներ. «Ինչո՞ւ ցավակցական հեռագիր չես տվել Հրայր քեռու մահվան կապակցությամբ հայրիկ:— Ի՞նչ,— սաստիկ զարմացավ հայրը: Մահացե՞լ է այդ... — զարմանքից Գևորգը նույնիսկ ակամա կանգնեց» (Ս. Խանզադյան): «Այդ բոլոր նամակները գրված են ձեր աշակերտի ձեռքով:— Ինչպե՞ս թե... — չհասկացավ Մամյանը,— մեր աշակերտը ի՞նչ,— ապշած ոտքի կանգնեց,— չի կարող պատահել (Վ. Պետրոսյան): «Ընկե՛ր նախագահ, քեզ հայտնի՞ է, որ անասնակերը վերջանալու վրա է,— ասաց Ռուբենը:— Ինչպե՞ս թե,— տեղը կանգնելով՝ հարցրեց Հասրաթյանը» (Ս. Խանզադյան): Մեկ այլ մասի մեջ ընդհանուր է «ելնել» բայը՝ նստած տեղից ելնել, ոտքի ելնել, վեր ելնել, տեղից ելնել: Ինչպես. «Հանկարծ թռավ ոտքի ու բղավեց.— Ուզում եք ինձ թաղե՞լ... Չարմանքից երեքով ոտքի ելանք ու հարցական նայում ենք նրան— Ի՞նչ է պատահել» (Գ. Արշակյան): «550 ոսկիի կը ծախեմ քեզի իր ամբողջությամբ... Արթին Յարենյան, առավել ևս անակնկալի եկած, իր աթոռեն վեր ելավ, բայց իսկույն իր տեղը նստեցավ ալ: Մերունին ժպտեցավ» (Ստ. Շահպազ): «Ծվ՛ երբ նրանք անցան կից սենյակը, ... այն»

պիսի բաներ լսեց, որ էլ չկարողացավ իր զարմանքը պահել:— Ի՞նչ... Ճրջմարի՞տ... — ասում էր նա՝ շուտ-շուտ տեղից ելնելով ու նստելով» (Ստ. Զորյան):

Մի երրորդ մասում նկատելի է «բարձրանալ» բայական բաղադրիչը՝ աթոռից բարձրանալ, նստած տեղից բարձրանալ, ոտքի բարձրանալ, տեղից բարձրանալ: Կան նաև այլևայլ կազմութուններ՝ «տեղից ցցվել, տնկվել, վեր կենալ»: «Այսպես հասանք մյուս կայարանը, հազիվ գնացքը կանգնել էր, մեկ էլ պառավի շնիկը, լեզուն հանած, վազեվազ ընկավ վագոն և եկավ թրուռավ պառավի գոգը: Ճամփորդները զարմանքից վեր կացան:— Ա՛, եկավ, շունն եկավ...» (Ստ. Զորյան):

Տեղից բարձրանալու վերջին շարժույթը՝ «նստած տեղից ոտքի թռչել», ի տարբերություն նախորդ երեքի, կապվում է միայն ծայրաստիճան զարմանքի հետ, որը մեծ անակնկալ է պարունակում: Ծիշտ է, զարմանքի պատճառի մեջ միշտ էլ անսպասելի տարր կա, բայց ներկա դեպքում անակնկալը գերազանցում է բոլոր սպասելիքները կամ պատկերացումները: Եռանդագին տեղաշարժը բնորոշվում է հետևյալ բայերով. ծառս լինել, ծլունգ լինել, ընդոստնել, թռչել, ցատկել, ոստնել, ծուլ լինել: Մարմնաշարժանքն արտացոլող բառակապակցությունների մեջ հիմնականում ունենք բայական հարադիրներ «վեր» բառով՝ վեր ոստնել, վեր ցատկել, վեր թռչել: «Այ, օրինակի համար, արևը միլիոնավոր անգամ մեծ է մեր երկրից: Պետրոսն իմ ասածից վեր թռավ շանթահար և, չիբուխը բերանից հանելով, հարցրեց.— Տո տղա, հո դու չե՞ս ցնդե» (Բ. Թովիկ): Հարադիրների մի ուրիշ մասում հանդես է գալիս «ոտք» գոյականային բաղադրիչը՝ «վեր» բառի փոխարեն մասնակցելով հարադիրների կազմությանը՝ ոտքի թռչել, ոտքի ցատկել: «Մանուշարյանը ժպտաց.— Ես անշափ ցանկանում էի Գառնիկի նշանադրությանը լինել... Ստեփանը ոտքի թռավ.— Նրանք արդեն նշանվե՞լ են,— աչքերը լայն բանալով համարյա բացականչեց նա» (Հ. Ղուկասյան): «Նախ ուզեց հանդիպել Փանոսին: Սա, դռան մեջ տեսնելով Կոմիտասին, անակնկալի եկած ոտքի ցատկեց գոչելով՝ Կոմիտաս ջան, դու այստե՞ղ... առանց գոնե մի հեռագիր տալու՞...» (Առաքել Պատրիկ): Սակայն բառակապակցությունների մեծ մասի մեջ «տեղ» գոյականն է՝ «նստած» որոշիչի հետ կամ առանց դրա՝ նստած տեղից ընդոստնել, նստած տեղից ծլունգ լինել, տեղը ծառս լինել, տեղից թռչել, տեղից ոստնել, տեղից վեր թռչել, տեղից ցատկել, տեղում ծառս լինել, նստած տեղից վեր ցատկել: «Օհանի պատասխանը կամ սաստիկ զարմանք պատճառեց վանեցուն, կամ նա իրան զարմացած ձևացնելով՝ տեղից վեր թռավ և... բացականչեց.— Տեր աստված, նման տղան չփչչություն կանե» (Բաֆֆի): «Փառնակ Գալուստիչ.— (ձայներ լսելով շրջվում է աջ և ապշած ցատկում է տեղից): Վա՛յ, մի էդ անամոթին տես, է՛... ոնց էլ ընկել է է՛ն կնոջ ետևից» (Գ. Տեր-Գրիգորյան):

2. Զգուշավորություն: Այս վարքաձևն արտահայտվում է երեք շարժույթով՝ «առանց շրջվելու դեմքը դեպի մեկը կամ մի բան հետ-հետ գնալ», «աչքերը թարթել», «խաշակնքել», որոնք մտնում են նաև «վախ» հոմանիշային շարքի մեջ: Այսպիսով, դրանք բազմիմաստ են, ըստ որում, «վախենալ» իմաստն անմիջականորեն նախորդում է «զարմանալ» իմաստին: Սա ցույց է տալիս, որ զուրմանքի պատճառը նախնական շրջանում երկակի բնույթ է ունեցել. արտասովոր օբյեկտն առաջ է բերել ոչ միայն երկյուղի, զգուշավորության, այլև հետաքրքրության զգացում: Ավելի ուշ, գործնական կյանքում ունեցած բազմաթիվ կրկնությունների հետևանքով, կատարվել է նշված շարժույթների իմաստների լայնացում. առաջ է եկել հաջորդ՝ «զարմանալ» իմաստը, որի պարագայում վախի աղբյուր կարող է այլևս չլինել: Վերջին հան-

դամանքը կարելի է նկատել բերվելիք օրինակներում: Առաջին շարժույթի առաջացման շրջանում անհրաժեշտ է եղել առանց շրջվելու՝ դեմքը դեպի մեկը կամ մի բան հետ-հետ գնալ՝ օբյեկտը շարունակ տեսադաշտում պահելու մղումով, հնարավորին չափ շատ իրազեկում ստանալու: Զգուշութունն ու հետաքրքրութունը քայլվածքի այդ ձևն էին պահանջում: Այժմ շարժույթը կատարվում է երկու տարբերակով: Մի դեպքում շարժասողը օբյեկտից հեռանում է մի քանի քայլ կամ ավելի: Արտացոլող բառային միավորներում շարժումը նշվում է՝ գնալ, ընկրկել, շարժվել, քայլել, քաշվել բայերով, որոնք հարադիրներ են կազմում հետ (ետ), հետ-հետ, հետ ու հետ բաղադրիչների գուգակցությամբ: Ինչպես. «Բալասանը ցանկացավ իմանալ, թե ինչ ավար է բաժին ընկել իրեն: Նախշավոր կափարիչը բարձրացրեց ու զարմանքից նույնիսկ ետ-ետ գնաց: Սնդուկի մեջ պառկած էր մի փոքրամարմին պառավ» (Ս. Խանզադյան): «Մեկեն սենյակի դուռը բացվելով՝ Շուշանը հեռապառ, քրտնած ներս մտավ. տեղես վե՛ր ցատկեցի, չեմ գիտեր, սիրտս ինչպես կաղաղակեր այդ պահուն: Աղջիկը զարմանահար ետ-ետ գնաց՝ անմեղունակ ժրպիտով մը:— Դո՛ւն ես, Շուշան, այս որքա՛ն բացակայութուն...» (Տ. Զյուկյուրյան): «— Ի՞նչ գործ, Ի՞նչ գործ:— Որ աղա Գրիգոր Մոսեիչի բոլոր կարողութունը հենց յուր ձեռքով ինձ վերա հաստատել տաս:— Ի՞նչ եք ասում, — սաստիկ զարմացած մի փանի ֆայլ ետ գնաց Սարգիսը, — մի՞թե ես այդ կարող եմ» (Նար-Դոս): Մյուս դեպքում շարժասողը զարմանքի աղբյուրից մի քայլ հետ է դնում (գնում), իսկ մեծ անակնկալ լինելիս հետ ցատկում: Օրինակներ. «... Անիծվի՛ նա, Տիկին, նա ձեր ծախքը տալիս է, հերիք է, էլ Ի՞նչ եք ուզում... Խեղճ կինն՝ ապշած նայեց երեսիս ու մի ֆայլ հետ դրեց: Երևի շատ էի բարկացած» (Շիրվանզադե): «Մարդ չէր գիտեր, որ իմ գրածս է: ... Երբ հայտնեցի Խաչիկին, ֆայլ մը ետ գնաց, թևերը լայն-լայն բացավ և գոչեց.— Զէ՛, ծո...» (Ա. Մառուկյան): «Վտիտ երիտասարդ.— Ես ձեզ միայն կարող եմ ասել, թե նա ում պրտածեն է: (Ինչ-որ բան է շշնջում նրա ականջին): Լայնալանջ դերասանուհի.— (ետ է ցատկում) Օ՛... Ուրեմն նրա սիրուհի՞ն է» (Գ. Տեր-Գրիգորյան):

Այս վարքաձևի հաջորդ շարժույթի սկզբնապատճառը ոչ թե օբյեկտը շարունակ տեսադաշտում պահելն է, այլ ճիշտ հակառակը: Տեսածից տազնապահար մարդը բնազդական շարժումով փակում է աչքերը, ասես խուսափելու համար իրազեկում ստանալուց. հետո նորից բացում է աչքերը, նորից փակում, կրկին բացում ու կրկին փակում: Սա հիմնականում տեղի է ունենում այնպիսի պարագայում, երբ նայողին անմիջականորեն վտանգ չի սպառնում, և միայն ականատես լինելն արդեն առաջ է բերում դիմախաղ: Այստեղից անցում «զարմանալ» իմաստին: Արտառոցի և անակնկալի իրազեկումից, զգուշավորության մղումով, շարժասողն արագ-արագ թարթում է աչքերն ասես ինչ-որ բան խանգարում է նրան նայելու: Ըստ որում, տեսողական սկզբը նապատճառն արդեն պարտադիր չէ. դիմախաղն, ամրակայված իմաստ ունենալով, կատարվում է նաև ոչ-տեսողական զարմանք առաջ բերող իրազեկում ստանալիս: Շարժույթը բազմազանորեն արտացոլված է հայերենում: Նկարագրող բառակապակցութուններում հիմնականում հանդես են գալիս բացխփել, թարթել, խփխփացնել, ճպճպացնել, քթթել հոմանիշային բայերը: Գոյականային գերակա անդամներն են. մի մասում՝ «աչքերը»: Օրինակ. «Իրենց դեմ անակնկալ կերպով ցցվող նավի առաջ կանգ էին առնում... և ապշած նայում.— Հը՞, ապեր, ո՛ւր էդպես. Գյուղացին աչքերը բացխփելով նայում էր նրան» (Կ. Զարյան): «Նա տեսածին շհավատաց. աչքերը բաց ու խուփաբեց, նայեց վերև, ներքև, նայեց շորս կողմը. «Երա՞զ է, ինչ է՛ չեմ հասկանում» (Վ. Տալյան): «Աչքերը թարթել»։ Ե՛մ հայրիկը բարձրանում է, նրս-

տում անկողնում, և սկսում է աչխեր արագ-արագ քարթել. նա իր զարմանքն այդպես է արտահայտում» (Բ. Հովսեփյան): «Աչքերը ճպճպացնել». «Հրանտ Քառյանը հանեց հինգուրբլիանոց և մեկնեց հեռախոսավարուհուն: Հեռախոսավարուհին աչխերը ճպճպացրեց, և Հրանտ Քառյանը դարձյալ ծիծաղեց: Իսկ հեռախոսավարուհին աչքերը ճպճպացրեց, ճպճպացրեց և ասաց.— Տո, շաշ հպարտ, ինչո՞վ ես ծխախոտ առնելու» (Ը. Մաթևոսյան): Բառակապակցությունների մեկ այլ մասում «արտևանունքներ» կամ «թարթիչներ» հոմանիշներն են՝ արտևանունքները թարթել, թարթիչները բացխփել, թարթիչները ճպճպացնել: Եվ մի երրորդ մասում էլ՝ «կոպ» գոյականը հոգնակի թվով՝ կոպերը թարթել (բացխփել, թարթել, ճպճպացնել): «Կոմիտասը պայուսակից հանեց ալյուրի մի կոշտ պարկ, փռեց և կուշ եկավ հատակին:— Ա՛յ, իմ անկողինը: Չէի կարողանում ուշքի գալ: Կոպերս արագ քարթելով... շարունակ դիտում էի այդ, իրաք, ճգնավորին» (Վ. Գալֆայան):

Վարքաձևի վերջին՝ «խաշակնքել» շարժույթը, հիմնականում կրոնական բովանդակություն ունի: Այդպիսիք են դրա յոթ իմաստներից հինգը: Ե-րդ իմաստի դեպքում՝ ինքնաքաջակերում, ինքնախրախուսում, շարժանքը կատարելով, շարժասողը դիմում է աստծո ապավինությանը, կամ սրբերի հովանավորությանը: 7-րդ իմաստն է՝ զարմանալ, ապշել: Ինչպես վախենալիս, այժմ էլ շարժույթն ուղեկցվում է Տեր Աստված, մեղա Աստծո, Հիսուս-Քրիստոս ու նման կարգի այլ արտահայտություններով, շարի խափանման ցանկություններով, որոնք այս դեպքում արդեն զարմանք են պարունակում: Շարժանքը լայնորեն արտացոլված է մեր լեզվում: Բառային միավորներում ունենք խաշակնքել, խաշ հանել, խաշ քաշել հիմնական բայական անդամները: Գոյականային անդամներից բառակապակցությունների մեծ մասում հանդես է գալիս «երես» բաղադրիչը՝ իր ուղիղ և տրական հոլովի ձևերով՝ երեսը խաշակնքել (խաշ հանել, խաշ քաշել) և՛ երեսին խաշակնքել (խաշ հանել, խաշ քաշել): Օրինակներ. «Առաջին սալլապանը, նկատելով ճանապարհին ընկած նորածնի բարուրը, զարմանքից երեսը խաշակնքում է. «Հիսուս Քրիստոս» է մրմնջում:— Սաղ է՞,— հարցնում է վրա եկած մյուս սալլապանը» (Գ. Զանիբեկյան): «Խեչո, էդ վո՛ւնց գնաց, վուր ես շտեսա: ... Տեր օղորմած աստուծ (երեսը խաշ հանելով) էս շախը՞» (Գ. Սունդուկյան): «Ինչքան մեծ եղավ Փիլիպոսի զարմանքը, երբ դուրը բանալը ու աչքով թորոսն ընկնելը մեկ եղավ... — Հիսուս ու Քրիստոս Աստված,— երեսին խաշակնքեց Փիլիպոսը,— տո սատանա հո շե՞ս, էս ե՛րբ եկար, ո՞ւմ հետ» (Պ. Պոռչյան): «Բակուրը դարձավ... վարորդին:— Գևորգ, տուն ենք գնում:— Տո՞ւն,— զարմացած երեսին խաշ հանեց վարորդը» (Ա. Սեկոյան): Համեմատաբար քիչ բառակապակցություններում «երես»-ին փոխարինում է «դեմք» հոմանիշը. «... ուղղակի աչքեցրեց Բագրատին: Տեսնելով հյուրին նա անսպասելիությունից նույնիսկ խաշակնքեց դեմքին» (Զ. Բալայան): Որոշ բառային միավորներում շկան ոչ «երես», ոչ «դեմք» գոյականները, միայն բայական հարադիրներ են կամ պարզապես «խաշակնքել» բայը: Խոսքի մեջ առավելապես գործածվում է վերջինս: Ինչպես. «Ծրբ պատմեցի մայրիկիս, սաստիկ զարմանքի «Տեր Աստված» մը արձակեց և... խաշակնքեց: Հերիսան շաքարո՞վ (Ա. Ծառուկյան):

3. Վանում, հեռացում: Միջավայրի անցանկալի ներգործությունից խուսափելու համար անհատը դիմում է տարբեր միջոցների, որոնցից մեկը՝ վանում, հեռացումն է իրենից: Այդ մղումով նա կատարում է այլևայլ շարժումներ, որոնք սկզբնապատճառ են դարձել մի քանի շարժասական խմբերի: Ներկա դեպքում մեզ հետաքրքրում են «ձեռքերը տարածել», «ուսերը թոթվել», «գլուխը տարուրեքել» շարժույթները, որոնք, մեր համոզմամբ, այլ բան չեն, քան արձագանքները երբեմնի վանման, հեռացման շարժումների: Շարժա-

սողը նշված մարմնամասերը շարժում, իսկ եռանդագին կատարելիս թափահարում է աջից ձախ կամ ներքևից վերև՝ ասես հետ մղելու, թոթափելու համար ինչ-որ բան, ցրելու ինչ-որ ճնշող ազդեցություն: Անդրադառնանք այդ շարժույթներին առանձին-առանձին:

«Ձեռքերը տարածել»: Թևերն ազդրերից հեռանում են դեպի կողք՝ մարմնի հետ կազմելով նվազագույնը 30 աստիճանի անկյուն, ավելի լայն են բացվում՝ խիստ զարմանալու դեպքում. ձեռքերը կարող են մնալ կրծքի, կամ գոտկատեղի և կամ ազդրերի մակարդակին, ավերն ուղղվում են դեպի առաջ: Արտացոլող բառակապակցություններում գոյականային գերակա անդամներն են՝ բնականաբար, «թևերը» կամ «ձեռքերը», որոնց հետ քիչ դեպքերում գործածվում են բանալ, բացել (բաց անել) բայերը («թևերը բացել», «երկու ձեռքը բանալ»): Իսկ հիմնականում հանդես են գալիս տարածել, պարզել բայերը, որոնք կարող են լինել նաև կրավորաձև: Օրինակներ. «Լսիր, հո խաթա չե՞ս, — զարմացած ձևանալով, քեեր տարածեց Բարթուղը» (Վ. Գրիգորյան): «Մարդ չէր դիտեր, որ իմ գրածս է: Երբ հայտնեցի խաշիկին, քայլ մը ետ գնաց, քեերը լայն-լայն բացավ և գոչեց. — Չէ՛, ծո...» (Ա. Մառուկյան): «Այ մեր, էս լալաշից օգեկոլորնի հոտ է գալիս, չլինի՞ թրջելիս ջրի մեջ դուխի ես թափել: Մայրս... լավաշի մի մի կտոր վերցնելով հոտ քաշեց: — Սա ի՞նչ բան է, իսկապես, — շվարեց նա, — ախր էս որտեղի՞ց է... — կրկնում էր խեղճ մայրս շուտ-շուտ ձեռքերը հարցական տարածելով» (Ստ. Ջորյան): «Մի շաբաթ առաջ դուք դիտեի՞ք, որ ես վաղը աշխատանքի չեմ գալու, — հարցնում եմ դիրեկտորին, և նրա ձեռքերը զարմանելով տարածվում են, — Ինչպե՞ս իմանալի, նոր իմացա» (Բ. Հովսեփյան):

Որոշ կազմություններում ունենք գործողության բացատրական բառեր՝ կողք, դեպի կողմ, աջուձախ: «Արտասանում էր Չարենցը երգուն տոնով, լըռում, հետո ձեռքերը սլարգում աջ ու ձախ ու բացականչում. — Ա՛յ տղա, էս ո՞նց է գրել...» (Գ. Մահարի): «Վայ, հոգիս կերավ, — ձեռքերը աջ ու ձախ տարածած շքեղանում էր բրիգադիրը, — բա չե՞ս ուզում, այ բալամ, որ քո գյուղացին ապրի» (Մ. Գալշոյան):

«Ուսերը թոթվել»: Շարժանքը բազմիմաստ է. «զարմանալ» իմաստին նախորդում են անտեղյակ լինել (չգիտեմ) և «տարակուսել» իմաստները: Մեկ ուր կամ ուսերը բարձրանում են վեր և իջնում. գլուխը թեթևակիորեն թեքվում է մի կողմ. ընդգծված զարմանքի դեպքում նաև շրթունքները փոքր-ինչ առաջ են ձգվում, իսկ դրանց եզրերը՝ նկատելիորեն իջնում: Արտացոլող բառակապակցություններում գերակա անդամը, ինչ խոսք, «ուս» գոյականն է՝ մեծագույն մասամբ հոգնակի, քիչ կազմություններում՝ եզակի թվով: Բայերը բազմազան են, ցույց են տալիս գործողության մանրամասնությունները: Մի մասում դրանք ուղղակի մատնանշում են ուսերի շարժումը՝ ուսերը շարժել, ուսերը ժած տալ, ուսերը ձգել, ուսերին անել, ուսերն իրար անել (իրար տալ). եթե շարժույթը կատարվում է եռանդագին՝ ուսերը գցել, ուսերը թափահարել (թափ տալ), ուսերը թոթվել, ուսերը թոթափել: Օրինակներ. «Բայց պառավ եմ, չէ՞, պառավ, քավթառ... — և նա դարձյալ մի տարօրինակ հայացք ձգելով կնոջ վրա... հեռացավ: Կինը ապշած շարժում էր ուսերը» (Շիրվանզադե): «Բայց գիտե՞ս, թի փեսաս ինչքան է հավանում քեզ. ասում է՝ սովորեք նրա նման մաքուր ու գեղեցիկ հայերեն խոսել: Մանեն ձգեց ուսերը. մի՞թե Լիլիալի փեսան երբևիցե լսել էր իրեն խոսելիս» (Ա. Սեկոյան): «Քո Շուրան այստեղ է: Նա զինկոմիսարիատից ուղեգիր բերեց, միացավ մեզ: — Գժվե՞լ է: Սերոժն ուսերը գցեց: — Ի՞նչ իմանաս» (Ս. Խանզադյան): «Ինձ մոտ մնացել են կոպեկներ: Երեկոյան խոսում եմ Ռոզանների հետ: Ուսները քափ են տալիս: — Թող չծախսեիր, քեզ ո՞վ էր հարկադրում: Համ էլ դու ու-

նեկի, մենք շունեկներ» (Ա. Ստեփանյան): «Շատ անհանգիստ էի. մտածում էի, որ վախից կարող էիք հիվանդանալ:— Հետո ձե՞զ ինչ: ... Կարճ ժամանակ նայեց ինձ զարմացած, հետո ուտերը քոթվեց տարակուսանքով» (Նար-Դոս):

Որոշ կառույցների մեջ մտնում են այնպիսի բայեր, որոնք ցույց են տալիս ուտերի շարժման ուղղութիւնը. մի մասում նշվում է միայն դեպի վերև ուղղութիւնը, «վեր» բառի միջոցով կամ առանց դրա՝ ուտերը բարձրանալ, ուտերը բարձրացնել, ուտերը վեր բարձրացնել, ուտերը վեր գցել, ուտերը վեր թռթվել, ուտերը վեր ձգել, ուտերը վեր-վեր անել, ուտերը վեր քաշել: «Դու Ավիկի հարևանն ես: Ովքե՞ր են նրա մոտ լինում: Ստեփանը զարմացած ուտեր բարձրացրեց. «Այս տղան խելքը թոցրե՞լ է» (Ա. Արաքսմանյան): «Հաճախ են ուտերս զարմանքից ինքնաբերաբար վեր բարձրանում... Սա ի՞նչ է արել կյանքում, որ Գերագույն խորհրդում ինչ անի» (Վ. Դավթյան): «է, Հասան փաշան ալ գիտե՞ս ով է: Ուտերը վեր քոթվելով, պանդուխտը արհամարհանքով կը մոմոար. «... Շունեն շատ Հասան փաշա կա» (Ա. Արփիսրյան): «Վաղը երեկոյան ժամը ութին պետք է լինեմ Երևանում... — Անհնար է, կենինգրադ—Երևան ուղերթը աշխատում է միայն զույգ օրերին: Ես նետվեցի դիսպետչերի մոտ: Սա ուտերը վեր կաշեց... — Զվացուցակ դոյութիւնն ունի» (Մարիա Փափազյան): Այլ կազմութիւններում նշվում է շարժման երկու ուղղութիւնն էլ՝ վերև ու ներքև. ավելանում են վայր, վար, ցածր բառերը՝ ուտերը վեր ու վայր անել, ուտերը վեր ու վար անել, ուտերը վեր ու վար շարժել, ուտերը վեր ու ցածր անել: «Ես նոր եմ ապուշ-ապուշ երեսին: նայում և անխոս շարունակ ուտերս վեր ու վայր անում: Երկու տարի էր, Եղոն մեր տանից կորել էր» (Պ. Պոռոյան): «Հիվանդ ես, պառկի՛ր, բյուլետեն բեր,— ուտերը վեր ու վեր շարժեց Զարդախյանը:— Բա Հասարթի տեղը լինեիր ի՞նչ կանեիր» (Ք. Թափալցյան): Շարժութի կատարման մեղմ աստիճանի դեպքում շարժասում են մեկ ուտով, ու հետևապես բառակապակցութիւններում էլ վերահիշյալ բայերի հետ «ուս» գոյականը հանդես է գալիս եզակի թվով: Ինչպես. «... ասաց Սոսյանը,— հա, մի բան հարցնեմ, կարո՞ղ է դու էլի գաս:— էլի ինչո՞ւ գամ,— ուտը քոթվեց աղջիկը» (Շ. Զաքարյան):

«Գլուխը տարուբերել»: Մի քանի անգամ, ոչ արագ, ականջի կողմից գլուխը թեքվում է մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ ուտը: Արտացոլող բառակապակցութիւններում գերակա անդամը միայն «գլուխ» գոյականն է. նըշենք ավելի հաճախ գործածվող բայերը՝ ճոճել, շարժել, տարուբերել, օրորել: Կազմութիւնների մի մասում լինում են շարժման ուղղութիւնը ցույց տվող բաղադրիչներ՝ աջ ու ձախ, աջից-ձախ, որով ունենում ենք հետևյալ տիպի կառույցներ՝ գլուխը աջ ու ձախ շարժել, գլուխը աջից-ձախ տարուբերել, գլուխն օրորել: Օրինակներ. «Այ թե ինչ բան է եղել տպարանը: ... Արշոն մի քանի անգամ անցավ լուսամուտից լուսամուտ, նայեց բաժանմունքները և գլուխը շարժեց զարմացած: Ամեն բան հետաքրքիր էր ու զարմանալի» (Ստ. Զորյան): «Մութել, շա՞տ խորն ա: Քանի՞ գազ կըլնի: Հազար: Սեղրակը գլուխը տարուբերեց զարմանքով:— Ամսեկան 35 մանեթ փող ա ստանում:— Երեսունհինգ մանեթ... — ու Սեղրակը գլուխը օրորեց զարմացած» (Ա. Ահարոնյան): «Տեսա, որ մեր թաղի ճնճողիկները հավաքված նոր բոյն են շինում իրենց աղետի ենթարկված հարևանների համար: Ժպտացի, գլուխս օրորեցի զարմանքից» (Վ. Անանյան):

4. Ներգործում սեփական անձի վրա: Վարքի այս ձևը հիմք է հանդիսացել շարժասական շորս խմբի առաջացման:

ա. Առավել հաճախ շարժասողը զարմանքն արտահայտում է ձեռքով հարվածելով իր մարմնի որոշակի մասերին՝ ազդրին, ծնկին, ճակատին, ձեռ-

քը ձեռքին: Նշված շարժումները, վերածվելով ստերեոտիպի, սկզբնապատճառ են դարձել շորս շարժույթների համար՝ «ձեռքն ազդրին խփել», «ձեռքը ծնկին խփել», «ձեռքը ճակատին խփել», «ծափ տալ»: Լինելով բազմիմաստ՝ առաջին երեքը մեծագույն մասամբ գործածվում են վիշտ, ափսոսանք արտահայտելու համար: Բայց քանի որ սակավ դեպքերում ունենք նաև զարմանքի իմաստ, ուստի թուուցիկ անդրադառնանք դրանց: «Ազդրին խփել». ափով հարվածել ծնկից վերև՝ ազդրին՝ առջևից կամ կողքից: «Ա՛յ մարդ... — Վենոն ձեռքը խփեց ազդրին և շարժեց օդում, իբրև զարմանքի նշան, — Ինչպե՞ս են մարդիկ ապրում էնտեղ... ա՛յ մարդ, — նա նորից ձեռքը խփեց ազդրին և ապա զարմանքով ու հարգանքով շարժեց օդում: — Ո՛չ բղավեց, ո՛չ վռնդեց...» (Մ. Արմեն): «Ծնկին խփել». կիսաբաց ափով հարվածել ծրնկին. սաստկական աստիճանի դեպքում շարժանքը կատարվում է երկու ձեռքով՝ միաժամանակ հարվածելով երկու ծնկներին: «Որոշեց մորը խնդրել, որպեսզի Սամսոնի լվացքը ձրի անի: Ախր Սամսոնն այնքան լավություն է անում իրեն: Զարգանդի մայրը զարմանքից ձեռքերը ծնկներին խփեց. — Բա անփող որ անեմ, խախրը ի՞նչ կասի: Զարգանդը զարմացած մնաց» (Շ. Թաթիկյան): «Քո էն հազար ուրբիլն էլ չկարողացա տալ, Ասլան... — ասաց Հասրաթյանը: — Վա՛յ, քու տունը շինվի, — բացականչեց Ասլանը՝ ձեռքը ծրնկին խփելով, — ես էլ կարծեցի բան է ասում: Մեր ախպերության մեջ ի՞նչ պարտք, ի՞նչ բան» (Ս. Խանզադյան): «Ափը (ափով) կամ ձեռքը (ձեռքով) ճակատին խփել». «Ասորյանը (ափով ճակատին խփելով. մեկուսի): Վա՛յ, քու տղիս տղա. Շիկամազյանը ինձ ասել էր խո՛ղա սոսկալի գին է, ես չէի հավատացել» (Ռ. Պատկանյան):

«Ծափ տալ» շարժույթը՝ ավելի հաճախ գործածվում է «երածշտության կշռույթը պահել», «խրախուսել, գովել» իմաստներով, թեև «զարմանալ» իմաստը ևս քիչ չի հանդիպում: Ըստ որում, վերջին դեպքում շարժանքը կատարվում է ձեռքերը մեկ անգամ իրար խփելով, իսկ նախորդ երկուսն արտահայտվում են ձեռքերը շատ անգամ միմյանց խփելով: Շարժույթը զանազան նկարագրություններ ունի: Ներկա իմաստի համար հիմնական ձևերն են. գործողությունը մատնանշում են զարկել (զարնել), խփել, շրխկացնել, շրմփացնել բայերը. որպես գերակա անդամ կազմությունների մի մասի մեջ մտնում է «ափ» գոյականը՝ երբեմն եզակի թվով (ափը ափին), երբեմն հոգնակի՝ ձեռքի հատկացուցիչի հետ կամ առանց դրա: Օրինակներ. «Լուսիկը, որ նորից դուրս էր գնում, կանգնեց, զարմանքից ափերը զարկեց իրար, բացականչեց. — Արտա՛շ, լսո՞ւմ ես: Լեցցի՛ր...» (Շ. Թաթիկյան): «Միամիտ, — ափը ափին խփեց Մարգարյանը, — որ թերակշռում են շե՞ն ջոկում, որ խաբում են, շեն ջոկո՞ւմ» (Մ. Մնացականյան): «Քարտուղարը մինչև դուռը ճանապարհ դրեց նրան և երբ վերադարձավ, ձեռքերի ափերը խփեց իրար և բացականչեց ծայրաստիճան ապշած. — Փա՛հ, ... տեսա՞ր, Պատրիկ, գիտե՞ս ով էր...» (Նար-Ռոս): Մի այլ մասի մեջ «ձեռք» գոյականն է, դարձյալ կամ եզակի (ձեռքը ձեռքին խփել) կամ հոգնակի թվով: «Այս ո՞վ է արել... Ծ՛ս... — կանչեց զարմացած իշխանուհին՝ ձեռքերը միմյանց խփելով, — այս ես ինքս էլ չեմ իմացել թե ինչպես է կատարվել» (Նար-Ռոս): «Ի՞նչ ես ասում, — ուրախ զարմանքով ձեռքերն իրար է զարկում մայրիկը» (Ա. Ստեփանյան): «Զարմացավ, երբ Մարիամը կրկնեց յուր խնդրանքը լրջորեն: «Հոգիս, քեզ զրկել ե՛ն, — գռչեց նա ձեռքը ձեռքին խփելով, — հոգիս, դու աղթա՞տ ես» (Շիրվանզադե): «Զարմանալ» իմաստով գործածվում են նաև «ծափ զարկել», «ծափ տալ» բայական հարադիրները: «Հանդիպումն այնքան անսպասելի էր, որ... ապշությունիցս ծափ զարկեցի ակամա» (Նար-Ռոս):

բ. Սեփական անձի վրա ներգործման մեկ այլ եղանակի հետևանքն են՝

«մատը կծել» և «շրթունքը (պոռոջը) կծել» շարժույթները: Երկուսի դեպքում էլ անհամեմատ ավելի տարածված են և գրականության մեջ նույն կերպ հաճախ հիշատակվում են «կոահել, գլխի ընկնել», «բարկանալ» իմաստները: Ներկայումս «զարմանալ» իմաստը քիչ է ընդունված և գրականության մեջ էլ հազվադեպ է հանդիպում: Սակայն մենք հակված ենք կարծելու, որ այդպես չի եղել անցյալում: Այս շարժույթները «զարմանալ» իմաստով նույնքան գործածական են եղել, որքան մյուսները: Դա նույնիսկ հիմք է հանդիսացել «մատը բերանում մնալ» և «շրթունքը կծել» փոխաբերական դարձվածքների, որոնք հասել են մեր օրերը և նշանակում են՝ զարմանալ, ապշել: Մանթո ղեպք է. երբ որևէ հարցում կասկածում են մեկի կարողության վրա, վերջինս հավաստում է, թե. «էնպես կանեմ, որ մատդ բերանդ (բերանումդ) կմնա, կամ «մատը բերանը (բերանում) կմնա» (օրինակ՝ նարդի, շախմատ խաղալիս): Տեսողական անակնկալից զարմացողը կարող է ասել. «որ շտեսա, շրթունքս կծեցի»: Ըստ որում, լինելով բնախոսական ինչ-ինչ ազդակների հետևանք, որոնց անդրադադնալը մեր խնդրից դուրս է, թե՛ մեկ, թե՛ մյուս շարժույթը «զարմանալ» իմաստով վաղնջական ժամանակներից ընդունված է եղել ոչ միայն հայ, այլև ուրիշ, միմյանցից շատ հեռու ապրող ժողովուրդների մեջ: (1) Այժմ բերենք մեկական գրական օրինակ: «Նոնան մտնում է Բուրաստանի տունը և աչքերի մեջ զարմանք դնելով՝ մատը կծում է: Բուրաստանը... արտասվում է:— էդ ի՞նչ է պատահել, քուրս, լա՞ց ես լինում,— հարցնում է Նոնան՝ աչքերում զարմանք և մատն ատամների տակից չի հանում» (Ս. Այվազյան): «Երբ նրան պատմեցի գործի բոլոր գաղտնիքները, նա զարմանքից պոռոջը կծեց» (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բանարան):

գ. Այս կետը ներառում է մի շարժույթ՝ «երեսը ճանկռել»: Ակնհայտ է, որ շարժանքը մնացուկն է խոր վշտի թելադրանքով այտերը ճանկռելու, որից հետքեր էին մնում արյունոտվելու աստիճան: Նախապես գործածվելով վշտի հետ առնչվող, բայց նաև զարմանալի դեպքերում, այնուհետև, ինչպես հատուկ է շարժույթներին, հեռացել է սկզբնապատճառից և ներկայումս ունի «զարմանալ» իմաստի ընդհանրական գործածություն: Ծանկռելն այստեղ խորհրդանշական բնույթ ունի: Երկու ձեռքի մատները ծայրերով վերից վար քսվելով այտերին՝ ցած են իջնում ծնոտի վրայով: Ունի կատարման մեղմ աստիճաններ. մի ձեռքի մատները սահում են մեկ այտի կամ միայն բերանի մի անկյան վրայով: Օրինակներ. «Մերս,— ասաց որդին,— ես այդ աղջկան պիտի առնեմ:— Տղա՛,— մայրը մատները ֆսեց երեսին, մնաց ապշած: Կրնամ ընկնեմ գետը, ... ի՞նչ կասեն մարդիկ» (Զ. Խալափյան): «Ձոթով լիմբերանը, իբրև զարմանքի նշան, երկու ձեռքով նանկռեց երեսները» (Ն. Զարյան): «Տիկին Բարբարեն սովոր շարժումով շանգոնց այտերը որպես խորին զարմանքի նշան ու ծոր տվեց. «Վո՛ւյ, վո՛ւյ, քոռանամ ես: Շա՞տ է սպիտակ» (էդ. Այվազյան): «Մեզ տեսնելուց բերանի մի անկյունը նանկռածով՝ բացականչեց.— Վուուույ... էդ նախշունությունն էլ մարդ կդիմանա՞» (Վ. Վաղարշյան):

դ. Այս կետը նույնպես ներառում է մի շարժույթ՝ «երեսը կամթել»: Շարժանքը դարձյալ մնացուկն է խոր ապրումներ ու հույզեր ունենալիս նկատվող վարքագծի: Տառապողը, կամթելով իր մարմնամասերը, կարծես ձգտում է մեղմել վշտի զգացումը, զսպել ներքին զգացումները, ապրումները, զայրույթը: Ըստ որում, այտերի այս կամթոցները հիշեցնում են մազերը փետելու շարժումները, որ բացասական հույզերի արտահայտման մեկ այլ վարքագիծ

1 Տե՛ս Խ. Խ. Миклухо-Маклай, Сообр. соч., т. 1, էջ 100:

է: Ներկա շարժանքում կամթողը խորհրդանշական բնույթ ունի և ի վերջո հանգեցրել է շարժույթի II տարբերակին՝ մատների ծայրով այտը միայն բռնել՝ չկամթել: Բնախոսական պահանջով կատարվող շարժումը, հեռանալով սկզբնապատճառ հանդիսացող վարքագծի դրսևորման եղանակից, կորցրել է նախկին իմաստը և վերածվել շարժանքի՝ «զարմանալ» նշանակութամբ: Օրինակներ. «Կասեն էդ հիվանդութեն որ սկսվեց, էլ վերջ շունի. Վայ-վա՛վելե՛ր, էդ ի՞նչ աստծու պատիժ էր,— որպես զարմացական նշան զույգ ձեռե՛րը կոնձելով երեսներ կամթեց ու աչքերը շոց Քերծոն» (Բ. Թովիկ): «Հըր՛,— շնչաց պառավը,— Մեղա՛ քեզ: Ա՛յ տղա, դու Միմոնի մինուճար Բագրա՛տն ես: Քոռանա՛մ,— պառավը մատներով բռնեց իր սմբած այտը:— Ուրեմն դու ո՞ղջ ես» (Ս. Խանզադյան): «Բայց սա տուն է, ազի, եկեղեցի չէ:— Վա՛յ, քոռանամ: Ազին մատներով բռնեց իր այտը:— Գծվե՛լ եմ, ինչ է» (նույնը):

5. Կենտրոնացում: Այս վարքաձևին դիմելիս, երբ հարկ է լինում ուշադրութունը լարել պարզելու համար ինչ-որ խնդիր, թափանցելու իրազեկման էության մեջ, մարմինը կամ նրա առանձին մասեր ընդունում են որոշակի դիրք՝ կախված ստացվող իրազեկման բնույթից, ուղիներից ու միջավայրի պայմաններից:

Առաջացած վիճակները կարող են լինել կարճ ժամանակով կամ տևական: Կենտրոնանալով զարմանքի աղբյուրի վրա՝ անհատը ձգտում է ավելի շատ իրազեկում ստանալ՝ ասես բացահայտելու արտասովորի և անսպասելի պատճառը: Ի հայտ են գալիս բնորոշ կեցվածքներ ու դիմախաղեր, որոնցից մենք կարող ենք կազմել հոմանիշային երկու ենթախումբ՝ կեցվածքային և դիմախաղային:

ա. Կեցվածքային ենթախումբ: Բաղկացած է շորս շարժույթից. առաջինն է «անշարժանալ»: Զարմացողը դադարում է շատ հաճախ որևէ շարժում անելուց, մարմինը տևական ժամանակ անփոփոխ վիճակում է, ուշադրութունն ամբողջովին իրազեկման աղբյուրին է ուղղված: «Զգուշավորութուն» կետում մենք տեսանք, որ զարմացողը մի քանի քայլ առաջ է գալիս կամ հետ-հետ գնում: Այժմ ավելացնենք, որ քայլելիս, անգամ վազելիս, ակնթարթորեն կանգ է առնում, անշարժանում՝ լրիվ տրվելով ստացած տպավորությանը: Ըստ որում, զարմանքի զգացումը երբեմն կարող է տիրապետող լինել երկյուղի նկատմամբ: Շարժույթի նկարագրութուններում նախ նշենք ընթացքը դադարեցնելը, շարժում մատնանշող բառային միավորները՝ կանգ առնել, անշարժ կանգնել, անշարժանալ, անշարժ մնալ. «Զայյանը, դստերը տեսնելով այդտեղ, այն էլ տան աղջկա պես սպասավորելիս, կանգ առավ հանկարծակիի եկածի պես և քիչ մնաց բացականչելով զարմանքից» (Ստ. Զորյան): «Ի՞նչ գեղեցիկ աղջիկ է... Ուսի վրայով մի պահ նայեց ետ:— Սա ի՞նչ է երեվակայում, կարծում է, թե իր մասին են ասում,— բարկացա ես: Գեղեցիկ աղջիկը նույնիսկ կանգ առավ զարմանքից» (Մ. Արմեն): «Վերգինե— (այնքան անսպասելի է Հովսեփի ասածը, որ մնում է անշարժ, մի երկու վայրկյան պաղ հայացքով նայում է մարդու երեսին» (Ստ. Զորյան): Այս վիճակը, երբ զարմացողը չի կարողանում տեղից շարժվել՝ ոչ առաջ գալ և ոչ հետ գրնալ, արտահայտված է տեղում (տեղնուտեղը) գամվել (մխվել), գամված (մխված) մնալ փոխաբերական բառակապակցութուններով. «Պոռացի հեռվեն... բարբարոս ձայնով մը. «Ի՞նչ հոտ է այս վրադ. գնա լվացվե շուտով»: Դոռն առջին զամված մնաց. չկրցավ առաջ գալ, երեսս նայեցավ ապշած՝ չըմբռնելով, որ շնչին հանցանքի մը համար այք այսքան անողորմ կգտնվիմ իրեն դեմ» (Գ. Զոհրապ): «Ու տեսնում եմ նրանց՝ Ստելային ու Մարգոյին... ետ դառնալիս: Նրանք զարմանքից սառչում, մխվում են տեղում» (Հրաչյա

Հովհաննիսյան): Պատկերավորութեան այլ ձևերում զարմանալը բնորոշվում է «արձանանալ», «քարանալ» բայերով. «Ուզեց ճշալ ու ետ փախչել, բայց զարմանքն ու հետաքրքրութունն այնքան մեծ էին, որ տեղուտեղը զամվեց և առձանացավ, աչքերը շորս շինած: Նորատի կինը կանգնած էր ծայրաստիճան զարմանքից... քառացած» (Նար-Դոս): «Լեզվատունը կեցվածքով շեմին հայտնվում է Միքայելի... Մորն ու Սեդային գրկախառնված տեսնելով՝ ապշանքից քառանում է: Չի հավատում աչքերին» (Գ. Տեր-Գրիգորյան):

Հաջորդ երեք շարժույթները՝ «ձեռքը բերանին դնել», «բռունցքը բերանին դնել», «ծնոտը բռնել», արտահայտման ընդհանուր գիծ ունեն, և մարմնամասերն էլ հարակից են: Զարմանքի տպավորության տակ ինքն իր մեջ ամփոփվելու համար շարժաստղը ձեռքով ծածկում է շրթունքները կամ ծնոտը, ու միայն նվազագույնի է հասցնում շարժումները, այլև, հատկապես առաջին երկուսի դեպքում, լուում է: Լուսթյունը կարող է տևել առնվազն այնքան, որքան կեցվածքը: «Ձեռքը բերանին դնել» շարժույթը լեզվի մեջ նկարագրվում է լայնորեն: Բառակապակցութուններում միշտ ունենք երկու գոյական՝ բաղադրիչ՝ «սփ»՝ ուղիղ ձևով կամ գործիական հոլովով (ափով), որին կարող է փոխարինել «ձեռք» գոյականը՝ ուղիղ ձևով կամ գործիական հոլովով (ձեռքով) և մյուս բաղադրիչը՝ «բերան», ուղիղ ձևով կամ տրական հոլովով (բերանին), որին էլ կարող են փոխարինել «շրթունքներ» կամ հազվադեպ «դունչ» գոյականները: Բայական բաղադրիչները մատնանշում են գործողության մանրամասներ: Եթե շարժույթը կարճ է տևում, գործածվում են «կպցնել» բայը կամ բացատրական զանազան բառեր՝ «մի պահ», «մի վայրկյան», «շատ կարճ». «Ընկերնե՛ր,— ծոր տվեց Սեդան,... ավով մի պահ բերանը փակեց վերապրելով նորից ինքն իր մեջ մի զարմանք, որ հիշել ու պատրաստվում էր հաղորդել ընկերներին» (Ա. Սահյան): «էդ ի՞նչ ա, ձեռք դնչին կպցնելով ասեց Վարդիթերը,— էդ մանիշակը որտեղի՞ց ա էս վախտը» (Պ. Պոռչյան): Տեական լինելը ցույց է տալիս «մնալ» բայը. «Մրա լեզվի ձեռքից ա խեղճ Անդոն նոր կնիկ առել: Նրա պառավը ձեռքը բերանին մեաց, մնաց, հետո հարցրեց սուտ-զարմացած... — Ի՞նչ կնիկ, այ Գիքոր» (Լ. Մաթևոսյան): Տեականության հետևանք են «ափիբերան լինել», «ափիբերան մընալ» փոխաբերական դարձվածքները, որոնք հեռացել են շարժասական բովանդակությունից և այժմ կարող են գործածվել զուտ լեզվական առումով՝ «զարմանալ», «ապշել» իմաստով: Եթե «կպցնել» բայը մատնանշում է նաև կատարման թեթևակի, մեղմ աստիճանը, ապա կատարման ուժգին՝ սաստկական աստիճանն ու տեականությունը՝ «հուպ» տալ, «սեղմել» բայերը. «Հարսները արմացել են ու ձեռները բերաններին հուպ տալի արմանքով: Ոչ ովի բերանը խոսք չի գալի» (Պ. Պոռչյան): «Ծրեխայի անունն ի՞նչ եք դրել,— հարց տվի պառավին... — Վո՛ւյ,— ձեռով բերանը պինկ սեղմեց իբրև զարմացական նշան պառավը,— մինչև կանաչ մեռոնն երեխի ճակատը շքան, նրան անուն չեն տալ» (Պ. Պոռչյան): Բառակապակցութունների մեծագույն մասում հանդես են գալիս «դնել, տանել, փակել» բայերը. «Պառավ Զանանը ավր դնում է շուրթերին,— Քա, վուշշշ,— զարմանում է,— քարը քե՞զ պիտի հանդիպեր, Արմա՛...» (Մ. Գալշոյան): «Ախթաթունի աչքն ընկավ Սաթեհիկի տարօրինակ հագուստ-կապուստին:— Ավա՛ր,— բացականչեց նա, ձեռքը բերանը տանելով,— էս ի՞նչ բան ի...» (Զ. Դարյան): «Մաննիկ հանրմ,— լսելի եղավ Օննիկ աղայի խիստ ձայնը,— ս՛վ է աս շոշուխը, դո՛ւրս հանե, շուտ: Պառավը ձեռքը բերանը տարավ ապշահար...» (Ս. Թնկրյան): «Հարսը շվարած ձեռքը տանում է շուրթերը. «էս մարդը գժվել է»։— Եղբայր Բագրատ, էսքան ո՞նց կմշակես» (Մ. Գալշոյան): «Մայրս զարմացած նայեց նորեկին, ... ձախով բերանը փակեց...» (Լ. Քոչար):

Քայական բառակապակցութիւններէց բացի, կարող ենք ցույց տալ նաև երկու մակբայական կառուց՝ «ափն ի շուրթ» և «ձեռքը բերանին»: «Այ մարդ, բա էսպես տո՛ւն կմտնեն: ... Աղջիկը զղմուկի վրա հայտնվել էր շեմին և ափն ի շուրթ նայում էր հոր ցեխակոլու ոտքերին» (Մ. Գալշոյան): «Խելքից դուրս է,— զարմացավ Արուսը:— Աղջի, դու հո խելագար չե՞ս... — ձեռքը բերանին մտածեց Արուսը» (Հ. Մաթևոսյան):

«Բռունցքը բերանին դնել» շարժույթը կարծես նախորդի շափազանցումը լինի: Ունի երեք տարբերակ. ա. բռունցքը կամ բռունցքները դնել շրթունքին, որ նույնն է՝ բռունցքը դնել կզակին, բ. բռունցքը կամ բռունցքները դնել շրթունքներին, գ. Յ-րդ տարբերակում բռունցքը կամ բռունցքները ոչ թե դրվում, այլ միայն մոտեցվում են բերանին: Այս կեցվածքը գրականութիւն մեջ սակավ է հիշատակվում: «Հայրիկ, երեխա՞ եմ, ի՞նչ է» որ... Նա շվերջացրեց խոսքը, ... գնաց, դուռը շրխկացնելով իր ետևից:— Բա՛, — արտասանեց Բաղիրյանի կինը... և ձեռքը բռունցք՝ շինած՝ դրեց շրթունքին ի նշան ապշու՞թիան» (Նար-Դոս): «Դու գիտե՞ս որդուդ ով է խելքից հանել: Այն լպստած... Հեղինե Սոլիկյանը:— Քա՛, — բացականչեց Օսանը և ձեռքերը բռունցք կազմած՝ դրեց շրթունքների վրա ի նշան ապշու՞թիան:— Քող ուր ուզում է գնա. ես դրան պահողը չեմ:— Քա՛, — արտասանեց Օսանը և նորից ձեռքերը բռունցք կազմած՝ դրեց շրթունքների վրա» (Նար-Դոս): «Փարսիդ... Գնա գլխեմես ուղ ըի, թե չէ էս շարացած սրտիս ինչ ջիգր ունիմ, քիզ վրա կու հանիմ: Գիծ Մոզի Վա՛, (բռունցքը բերանին մոտեցնելով)...» (Գ. Սունդուկյան):

Ենթախմբի վերջին՝ «ծնոտը բռնել» (կզակը բռնել) շարժույթը գրականութիւն մեջ առավելապես հանդիպում է իր «մտահոգ լինել», «խնդրել (աղաչել)» իմաստներով: Շարժասողը մի ձեռքի մատներով բռնում է ծնոտը (կզակը): «Զարմանալ» իմաստի օրինակներ. «Տատը կես ճամփին կանգ առավ, բռնեց ծնոտն ու գլուխը զարմացած օրորեց. «Աղջի...» (Վ. Տալյան): «Մայրս է. ... Բաց է անում դուռը, ... բայց ապշած նայում է ինձ:— Տիգրա՛ն... — ես ձեռքը տանում է ծնոտին, — Աստված իմ, ինչքան ես փոխվել» (Պ. Զեյթունցյան):

բ. Դիմախաղային ենթախումբ: Կենտրոնացումը զարմանքի իրազեկման վրա դրսևորվում է դեմքի վրա եղող մարմնամասերի միջոցով: Ըստ որում, այս դիմախաղերը կեցվածքների պես տեական են և որոշ ժամանակ շարունակում են վկայել շարժասողի հոգեվիճակի մասին: Շարժույթները շորսն են՝ «դեմքը երկարել», «բերանը բաց մնալ», «հոնքերը բարձրացնել», «աչքերը շոնել»: «Դեմքը երկարել» դիմախաղը նկարագրող բառակապակցութիւններում բնորոշվում է հետևյալ նրբագծով. դեմքը (երեսը) երկարանում է (կամ շարժասողը երկարացնում է), և կամ դեմքը (երեսը) ձգվում է: «Զեմ տալ, ասում եմ, — կրկնեց նիկողայոսը... Զարմանքից Սոփիոյի դեմքը երկարացավ... — Հետո՞... Հետո փող շունեմ, Սոփիո» (Շիրվանզադե): «Երեք հա՛տ... — բացականչում է Ափնանց մեծ հարսը՝ զարմանքից դեմքը երկարացնելով:— էդ ո՞վ ա տեհել, Աղջի» (Ստ. Զորյան): «Զգիտեմ, ում հետ ես տեսել, Փառիկ, բայց ես ամուսին չունեմ... — Փառիկի մտտը դեմքը երկարեց, օտարացավ. — Սպասիր, բա դու պոչիտեխնիկումում չէիր սովորո՞ւմ» (Ա. Ստեփանյան): Դիմախաղի տեականութիւնն առանձնապես երևում է գոյականային բառակապակցութիւններում, որոնցում որպէս «դեմք (երես)» բաղադրիչների որոշիչներ են հանդես գալիս «ձգված», «երկարած» հարակատար դերբայները: «Հրամայված էր հետ քաշվել, առանց դիմադրութիւն: Ներկաների ձգված դեմքից պարզ երևում էր, որ բան չեն հասկանում իրենց լսածից, լուռ են, այնքան անսպասելի էր ամեն ինչ...» (էդ. Իսաբեկյան): «Հինգ րոպե շանցած՝

վերագրածով... զարմանքից երկարած դեմքով և հայտնեց, թե հաշվապահը տանը չէ» (Ստ. Զորյան): «Մացակ Ավագյանը կանգ առավ զարմանքից երկարած երեսով, աչքերն այնպես լայնացան, որ կարծես թե սկսում էր խելագարվել» (Ն. Զարյան):

«Բերանը բաց մնալ» շարժույթը, ինչպես հաստատում են հոգեբաններն ու բնախոսները, արդյունք է գերլարված ուշադրության, ծայրաստիճան տրպավորվածություն: Խիստ գրգռվում են ուղեղի որոշակի օջախները, մինչդեռ հակառակը, ուրիշ կենտրոններ, մասնավորապես, շարժունակությունը, մարմնի որոշակի մասերի գործողությունները վերահսկողները մասամբ կամ լրիվ արգելակվում են:

Այսպես էր կեցվածքային ենթախմբի «Անշարժանալ» դեպքում: Այժմ թույլ է կամ բացակայում է բերանը փակ վիճակում պահելու դիրքի հսկողությունը: Շարժասողն այսպիսի խիստ գրգռված վիճակում շարունակում է հետևել զարմանքի աղբյուրին կամ մտովի վերլուծել այն, ինչպես ասում են՝ «բերանը փակելը մոռանում է»: Դիմախաղն այնքան սովորական է, որ այն արտացոլող «բերանը բաց մնալ» բառակապակցությունը, հեռանալով շարժասական բովանդակությունից, վերածվել է դարձվածքի՝ «զարմանալ», «ապշել» փոխաբերական իմաստով. «էնպես խորոված պատրաստեմ, որ բերանդ բաց մնա», «էնպես բաներ կպատմի, որ բերանդ բաց կմնա» (խոսակցական առօրյա): Շարժույթը լեզվում արտացոլում են հիմնականում բայական կամ մակբայական բառային միավորները: Բայական բառակապակցությունների մեծ մասում, որպես գերակա անդամ, իհարկե, հանդիպում է «բերան» գոյականը՝ բացել (բաց անել). այլ բառակապակցություններ նշում են նկարագրական ուրիշ մանրամասնություններ՝ տարբեր գոյականներով՝ «շրթունքները ետ բացվել», «ծնոտը կախվել»: «Դուք պիտի խլեք աղա Գրիգոր Մոսեիչի բոլոր կարողությունը, — ասաց Դարյա Կիրիլովնան: Բարսեղն այդ խոսքերի վրա միայն չոց աչքերը, բացեց բերանը... — Դուք նայում եք ինձ սաստիկ զարմացած...» (Նար-Դոս): «Գնա՛, Մարիաննա՛, գնա՛ նոր բախտ որոնելու: Քողամեն ինչ՝ Շահնին, ինձ, այս տունը... Խ՛նչ... — Մարիաննայի ծնօտն անօգնական կախվեց» (Ա. Ստեփանյան): Մակբայական բառային միավորներում բարդ բառեր են՝ «բերանբաց», «բերանբաց», իսկ բառակապակցություններում վերջում միշտ հանդես է գալիս «բաց» բաղադրիչը: «Աստված չկա... — Սո՛ւա... — ու ներս փախավ՝ թողնելով ինձ բերանբաց՝ բերանը բաց ջրհորի մոտ» (Գ. Մահարի): «Տիրացուն կարդում էր... հրամանը, իսկ տերտերն ու տանուտերը բերանները բաց՝ մտիկ էին տալիս և զարմացմամբ զրլուխները ծանր շարժում» (Պ. Պոռչյան): Դիմախաղի կատարման մեղմ աստիճանը մատնանշվում է «կիսաբաց» բաղադրիչի միջոցով. «... հոգոց հանեց պոետը... ու զարմանքը կիսաբաց արեց նրա շուրթերը. տաղերգուն երգեց հենց այդ. — Սիրեցի, յարս տարան...» (Վ. Տալյան): «Շշմած վեր թռավ նստեց ու բերանը կիսաբաց րոպեաշափ ապուշի պես նայում էր մեզ» (Պ. Պոռչյան): Կատարման սաստկական աստիճանում ավելանում են բնորոշող ու մանրամասնող այլևայլ բառեր՝ «լայն», «մի գազ». կամ, «բացել» բայի փոխարեն գործածվում է «չոել»: «Լսվեց Ավետ Ավետիսյանի բաղաձայնը: Նա մոտեցավ թե չէ՝ հոնքերը վեր քաշեց ու բերանը մի գազ բաց արեց. — Վա՛հ, Գուրգեն, դու ե՛ս...» (Գ. Զանիբեկյան): «Նույնիսկ մենք զարմացանք, բերաններս չոցիմ: Մեծ տատը հագել էր տոնական, շքեղ իր զուգսը» (Ս. Խանզադյան): Դիմախաղի տևողությունը մատնանշելու համար կարող են գործածվել ժամանակային իմաստ արտահայտող այլևայլ բառեր. բայական բառակապակցությունների վերջում ավելանում է «մնալ» բայը, իսկ մակբայները, լինելով ձևի, ինքնին արդեն ցույց են տալիս տևականություն:

«Վա՛հ... — բաց մնաց բերանս,— ի՞նչ...» (Պ. Պոռոյան): «Ելեց լրագիրը Քոմաս Գասպարիչի ձեռքից, ... ճղեց, ... շարտեց... Նայեցի Քոմաս Գասպարիչին: Նստած էր ապուշի նման բերանը բաց՝ նայում էր հորս» (Նար-Գոս):

«Հոնքերը բարձրացնել» դիմախաղի կատարմանը առավել հաճախ մասնակցում են երկու հոնքերը, համեմատաբար պակաս՝ մեկը՝ աչ կամ ձախ հոնքը: Հոնքերը վեր են ձգվում, վերին կոպերը բացվում են, ճակատին գոյանում են հորիզոնական կնճիռներ. հաճախ փոքր-ինչ հետ է մղվում գլուխը, շրթունքները սեղմվում են: Շարժույթը զանազան մանրամասնություններով արտացոլված է հայոց լեզվում: Բառակապակցությունները, որոնց թիվը հասնում է հարյուրի, մեծագույն մասամբ բայական են. կան մի քանի գոյականային, մակբայական կառույցներ: Որպես գերակա անդամ, հանդես են գալիս «հոնք» և նրա հոմանիշ «ունք» գոյականային բաղադրիչները՝ բնականաբար, ավելի հաճախ հոգնակի թվով, մի հոնքի մասնակցությունը ցույց տվողներում՝ եզակի: Բայական բաղադրիչները դիմախաղը ներկայացնում են տարբեր կողմերից: Նախ քանակով աչքի են ընկնում հոնքերի շարժման ուղղությունը նշողները՝ դեպքերի մի մասում հարադիրներ կազմելով «վեր», «վերև» բաղադրիչների հետ. հոնքերը բարձրանալ, հոնքերը բարձրացնել, հոնքերը վեր առնել, հոնքերը վեր ձգվել, հոնքերը վեր սահել, հոնքերը վեր քաշել, ունքերը վեր ելնել, ունքերը բարձրացնել, ունքերը վեր քաշել և այլն: Օրինակներ. «Ասացի, որ մի միտք շարագրեց ոչ այնպես, ինչպես Մարքսի մոտ ... Արշավիր Մելիքյանի հոնքերը բարձրացան: Աչքերում զարմանք կար» (Ռ. Զարյան): «Աղջիկն ապշահար բարձրացրեց հոնքերը. նրան անշափ զարմացրեց Սոսյանի վրդովմունքը» (Շ. Զաքարյան): «Երբեմն երեսը դարձնում էր ներսի մարդկանց, հոնքերը զարմացած վեր առնում» (Կ. Զարյան): «Հիմա ես ի՞նչ անեմ, Գարեգին:— Մի՞թե պարզ չէ,— հոնքերը վեր ձգելով հարցրեց Գարեգինը... — կգնաս շրջկոմ, ամեն ինչ կպատմես...» (Ս. Խանզադյան): «Ի՞նչ գրքեր ես կարդացել,— հարցրեց... թվեցի կարդացածս վեպերից մի քանիսը: Ծերունին զարմանքից վեր կաշեց... հոնքերը» (Վ. Անանյան):

Հոնքերը բարձրանալիս զատվում են միմյանցից դեպի աչ ու ձախ: Այս մանրամասնությունն արտացոլված է մի քանի բառակապակցությամբ՝ հոնքերը բաժանվել, հոնքերը երկու կես լինել: Սակայն հոնքերը բարձրանալիս առավել ընդգծված աղեղի ձև են ստանում, որ ցույց են տալիս զանազան բայեր հետևյալ կազմություններում. հոնքերը կեռանալ, հոնքերը կեռվել, հոնքերը կլորանալ, ունքերը կորանալ, ունքը ծռել, հոնքը ճակատին աղեղվել, հոնքերի աղեղները լարել, հոնքերն աղեղնաձև վեր բարձրանալ: Ինչպես. «Ծս խելացի աղջիկներին շեմ սիրում,— բռնկվեց տղան... Աղջկա հոնքերը զարմանքից կեռվեցին, վեր բարձրացան» (Մ. Սարգսյան): «Ինձ մեղադրում է գողության մեջ և ցանկանում է հեռացնել բրիգադիրությունից... Գարեգինի մի հոնքը կեռվեց ճակատին.— Այ քեզ նորոթյուն...» զարմացած բացականչեց նա» (Ս. Խանզադյան): «Ռուզուֆի հոնքերը աղեղնաձև վեր բարձրացան: Նա սաստիկ զարմանք արտահայտեց.— Զեմ հասկանում» (Շ. Քաթիկյան): Բուռն զարմանքի դեպքում հոնքերը ոչ թե սահում, այլ ցնցումով վեր են բարձրանում, որը սկիզբ է տվել ուղղակի և անուղղակի իմաստներով տասընյակ բառակապակցությունների՝ հոնքերը (ունքերը) ճակատը թռչել, հոնքերը (ունքերը) ճակատին թոցնել, հոնքերը վերև նետվել, հոնքերը (ունքերը) վեր թռչել (թոցնել), հոնքը (ունքը) վեր թռչել (թոցնել): «Միլիցիոները սեղանին դրեց մի հարցաթերթիկ ու հարցրեց.— Ազգանո՞ւնը... Փափազյանի հոնքերը վեր թռան:— Անո՞ւնը... Փափազյանը զարմանքից սառեց: Մի՞թե իրեն չեն ճանաչում» (Ռ. Զարյան): «Ներս մտավ քաղբաժնի պետը... Զար-

մանքից նրա հոնկերը բռան նակատը.— Օհո՛, ինչպիսի՛ տաքուկ անկյուն, ինչպիսի՛ առատ սեղան...» (Ք. Քափայցյան): «Տեսնելով Մանեի բռնած դիրքը՝ կանգ առավ զարմացած, որից նրա ձախ ունկն էլ վերև թռավ» (Նար-Դոս): «Սուսաննան զարմանքից սև հոնքերը վեր բոցրեց» (Վ. Տալյան): «Պապըն... հոնքերը վեր գցելով՝ հարցական նայեց նրան:— Ինչի՞ ես խանում-խաթուն թագուհուս նեղություն տալիս, Գարեգին,— հարցրեց նա» (Ս. Խան-զադյան): «Աղջկա բարակ հոնկերը ի նշան զարմանքի, վերև նետվեցին.— վարազդա՛տ...» (Ա. Սահինյան):

Եվ վերջին շարժույթը՝ «աչքերը շոն»: Վերին կոպերը մինչև վերջ վեր են բարձրանում, հոնքերը նույնպես փոքր-ինչ վեր են բարձրանում, բիբերը լայնանում: Այս դիմախաղը գեղարվեստական գրականության մեջ հաճախ բնորոշվում է որպես մի վիճակ, երբ «աչքերը ակնախոտոշներից դուրս են պրծնում», «աչքերի գնդերը դուրս թռչելու շափ բարձրանում»: Շարժասողը շարունակ կհետրոնացած է զարմանքի աղբյուրի վրա, տևականորեն դիտելով ձգտում է շատ իրազեկում ստանալ դրա վերաբերյալ, մտնել մանրամասների մեջ: Սակայն սկզբնապես կապված լինելով տեսողական շարժառիթների հետ, ավելի ուշ դիմախաղը սկսել է ի հայտ գալ նաև այլ զգայությունների, մաս-նավորապես, լսողական իրազեկման ժամանակ: Դրանով այն վերածվում է շարժույթի, ինչպես կտեսնենք բերվելիք օրինակներում: «Աչքերը շոն» շար-ժույթը հայերենում արտացոլված է մանրամասնորեն՝ առնվազն 70 բառա-կապակցություններով, որոնց մեծագույն մասը բայական են, կան նաև քսանից ավելի գոյականային և մի քանի մակբայական կառույցներ: Գրեթե ամենու-րեք գերակա անդամն է «աչք» գոյականը՝ հոգնակի թվով, մի տասնյակի շափ կազմություններում փոխարինում է «բիր» գոյականը՝ դարձյալ հոգնակի թը-վով: Արտացոլումներում շեշտվում են դիմախաղի մի քանի հատկանիշներ՝ առաջին հերթին, և ամենից հաճախ, աչքերն արտասովոր շափով բացվելը, որը ցույց են տալիս նախ՝ լայնանալ, լայնացնել, լայն, լայն-լայն, լայնորեն բաղադրիչները՝ բացել (բաց անել) բայերի հետ: «Ասացի, որ արտասահման-յան սիգարետ է, ցույց տվեցի Ռաֆիկ Ղամբարյանին: ... — Ա՛յ, սիգարետ, ա՛յ, ծուխ... Փափո՛ւկ, փափո՛ւկ... Հանկարծ նայեց... պիտակին, աչքերը լայն-լայն բացեց ու զարմացած գռչեց.— Արա, «Ավրորա» է...» (Վ. Բալա-յան): «Նոր միայն հիշեց Շուշանին, որը հյուրասենյակի մեջտեղում կանգ-նած, աչքերը զարմանքից լայն-լայն բաց արած, լսում էր» (Շ. Քաթիկյան): «Օհան աղաս, ի՞նչ կրեսս, քեզի հետ խնամի ըլլա՞նք: Օհան աղայի աչքերը բացվեցան լայնօրեն» (Ս. Քնկրրյան): «Շեմքին կանգնած է գինվորը: ... Սպան ցած է դնում բաժակը: Բիբերն արտասովոր լայնանում են.— Արտաշ՛ես...» (Գ. Բորյան): «Այո,— շարունակեց Ստեփանը,— սիրել եմ դեռ Մոսկվայում... Գառնիկը նայում էր զարմանքից լայն բաց արած աչքերով:— Ծս,— շնչաց Ստեփանը,— խաբել եմ քեզ... Գառնիկը լսում էր լայն բաց արած աչքերով» (Հ. Ղուկասյան): Բառակապակցությունների մի մասում աչքերն արտասովոր կերպով բաց անելն արտահայտվում է առանձին բայերով, որոնցից են՝ ճոթ-ոնել, ճոթթել, շոնել, պլզել, պլշացնել, պլշել: «30 մանեթ կյանքիս մեջ առա-ջին անգամ... Մորս և եղբորս աչքերը նոթվեցան զարմացումից» (Պ. Պոռչ-յան): «Պիտի երթաս տուն, ատ բոլոր դեղերը պիտի թափես... Աչքերս շոնցի: Նկատելով զարմանքս՝ շարունակեց.— Այո. պիտի թափես, ատոնք են, որ քեզի այս վիճակին հասցուցած են» (Գ. Ստեփանյան): «Զարմանքից աչքերս շոնվեցին: Մարդն ավարտել էր Գևորգյան ճեմարանը և... դարձել հովիվ: Իմ զարմանքը նկատելով ծերունին ժպտաց» (Խ. Գյուլնազարյան): «Բուբենի ոտ-քերի ձայնից նա շուռ տվեց գլուխը... զարմացած շոնց բիբերը» (Ա. Ստե-

փանյան): «Տեսնես ի՞նչ է ուզում անել մայրը:— Վեր կաց,— բարկացավ նա
աչխերը զարմանքից պլշած Աշխենի վրա» (նույնը):

Ուրիշ բառակապակցություններում ընդգծվում է աչքերի մեծությունը՝
խոշորանալ, մեծանալ բայերի միջոցով՝ աչքերը խոշորանալ, աչքերը խոշո-
րացնել, աչքերը մեծանալ, աչքերը մեծացնել, խոշորացած աչքեր, խոշորա-
ցած բիբեր, մեծացած աչքեր: «Հանկարծ նրա սև աչխեր մեծացան, մի պահ
նայողին թվում էր, թե նրանք իրենց բներից դուրս կթռչեն... Եվ մի ոստյուն
գործեց, ... գռչեց.— Աղո՛, սիրելի Աղո...» (Ք. Քափալցյան): «Կին մը, մո-
տիկեն, ափիբերան մնացած և ականջին շհավատալով, Վարդուհին կնայի
խոշորացած աչխերով» (Հ. Ասատուրյան): Վերջապես, որոշ բառակապակցու-
թյուններում էլ շեշտվում է աչքերի կլորություն հատկանիշը՝ աչքերը կլորա-
նալ, աչքերը կլորացնել, աչքերի բիբերը կլորանալ, աչքերը կլոր-կլոր, կլոր
աչքեր, կլորացած աչքեր: «Արամը շարունակեց.— թող ում հետ ուզում է
ամուսնանա, իսկ ես եկել եմ երեխային տանելու: Նանի աչխերը կլորացան:
— Մորից ինչպե՞ս կարող ես պոկել ծծկեր երեխային» (Ս. Այվազյան): «Զեմ
գիտեր, ուր է այդ Կորդովա քաղաքը:— Կորդովա՞,— բամբեց Օսկան աղան,
շմամոթի պես նայելով հորս, աչխերը կլոր-կլոր.— Կյանքիս մեջ առաջին ան-
գամ կլսեմ» (Կ. Սուրենյան): «Նատոն ապշած նայում էր նրան չռած, կլոր
աչխերով» (Ա. Ստեփանյան): «Կնոջ ինչի՞ն է պետք խելքը... — անփույթ
նետում է Կատարյանը: Սեղան զարմանքից կլորացած աչխեր բարձրացնում
է Կատարյանի վրա» (Ա. Սահինյան):

Եվ այսպես. մենք քննության առանք «զարմանալ» շարժասական հոմա-
նիշային շարքը. այն բաժանեցինք շարժույթների խմբերի՝ պայմանավորված
սկզբնապատճառ հանդիսացող վարքի ձևերով, որոնք էին՝ տեղից բարձրա-
ցում, զգուշավորություն, հեռացում (վանում), սեփական անձի վրա ներգոր-
ծում, կենտրոնացում: Լուսարանելիս հիմնականում կանգ էինք առնում այն
դեպքերի վրա, երբ շարժաստղը դիմում էր մեկ առանձին վարքաձևի, մեկ
շարժույթի: Սակայն գործնական կյանքում ոչ միշտ է այսպես տարանջատ
լինում: Առավել հաճախ համատեղ (միաժամանակ) համայիրների ձևով գոր-
ծածովում են տարբեր վարքաձևերի ու խմբերի շարժույթներ, որոնք կարող
են լինել թե հոմանիշ, թե տարիմաստ: Ցույց տանք օրինակներով, ինչպես է
շարժաստղն արձագանքում զարմանքի համալիրներով: Համեմատաբար հա-
ճախ համալիրներում հանդիպում է «անշարժանալ» կեցվածքը, որի ֆոնի
վրա կատարվում են նաև այլ շարժույթներ: Շատ հաճախ են զուգակցվում
«բերանը բաց մնալ» և «աչքերը չոել» դիմախաղերը՝ լայն բացվելու ընդ-
հանուր գծի պատճառով: Իսկ ընդհանրապես լինում են ամենատարբեր շար-
ժույթների զուգորդություններ: Նար-Գոսի «Ծս և նա» պատմվածքում ձախո-
ղակ իրավաբանը անսպասելի հանդիպման արձագանքում է մեկ կենտրո-
նացման և մեկ սեփական անձի վրա ներգործման շարժույթներով. «Մի ան-
գամ,— այդ մեր հարաբերությունների խզման հինգերորդ տարումն էր,—
փողոցում բոլորովին պատահական հանդիպեցի նրան՝ իմ սիրո նախկին ա-
ռարկային: Այդ հանդիպումն այնքան անսպասելի էր ինձ համար, որ կար-
ծես կայծակնահար զամվեցի տեղս նրա առջև և ապշույթունիցս ծափ զար-
կեցի ակամա»: Ի տարբերություն բերված օրինակի, որտեղ իրազեկումը տե-
սողական էր, Սերո Խանզադյանի «Հողը» վեպում՝ լսողական է. պապը, իմա-
նալով Գարեգինի անակնկալ որոշման մասին, արձագանքում է երկու՝ կենտ-
րոնացման ու զգուշավորության դիմախաղերով: «Ավետր բռնեց ձիու սան-
ձը:— Տար կոլտնտեսության գոմը,— անսպասելի ասաց Գարեգինը... Պապը
զարմանքից լայն բաց արեց բերանը:— Պապ, կայծակին ես նվիրում եմ կու-
տրնտեսությանը: Մերունին զարմանալի արագությամբ քաշեց աչխերը, ա-

սես արևի սուր ճառագայթներն րնկան նրանց վրա»: Այժմ զարմանքի երեք հոմանիշներով համալիրներ: Լամբարյանի և Հասմիկի թևանդուկ գրոսնելը ն. Զարյանի «Հացավան» վեպում հետևյալ ազդեցությունն է թողնում ակահատեսների վրա: «Թևանցուկ զույգին տեսնելով՝ նրանք կայծակնափառ կանգ առան: Յոթնովիմբերանը, իբրև զարմանքի նշան, աչքերը նոթոնց, երկու ձեռքով ճանկոնց երեսները և բացականչեց...»: Սաստիկ զարմանքի դեպքում, «անշարժանալ», «բերանը բաց մնալ», «աչքերը շոնլ» շարժույթները զուգակցվելով, ընդգծված ներկայացնում են կենտրոնացումը իրագեկման աղբյուրի վրա՝ լինի դա տեսողական, թե լսողական: Զորի Բալայանի «Կողոպուտ» փաստագրական պատմվածքում գործարանից ոսկու հափշտակության դրվագում այդ կերպ է նկարագրվում ականատեսի զարմանքը, ապշանքը: «Հասան այն արտադրամասը, որտեղ ոսկին էր: ... Սկսեց պարկի մեջ լցնել ձուկակտորները: ... Ու երբ արդեն ուզում էին ծլկել պատուհանից, տեսան մի մարդու, որ... իրենց էր նայում: Մարդը աչքերը շոած, բերանը բացած, կանգնել էր անշարժ, ասես փառացած»: Նույնպիսի մի վիճակ է ապրում Հրաչյա Հովհաննիսյանը «Ոսկե ամպ» ինքնակենսագրական վեպում՝ լսելով մարդկանց էկլետիկ, կցոնքներ դարձած անուններ՝ կազմված հեղափոխականների անունների ու քաղաքական բաների բեկորներից: «Ես մեխվում եմ տեղումս, աչքերս շոած, բերանս բաց, լեզուս փակ: Ա՛յ քեզ հնարամտություն, ա՛յ քեզ նորություն»:

Հողվածում մենք ներկայացրինք «զարմանալ» իմաստն ունեցող 26 հոմանիշ, որոնցից տասը շարժանքներ են, երեքը՝ մարմնաշարժանքներ, վեցը՝ կեցվածքներ, հինգը՝ դիմախաղեր, մեկը՝ քայլվածքի ձև:

Е. А. ГЕВОРКЯН—Выражение удивления в жестикуляции армян (филологическое исследование). —С начала жизни, постоянно получая информацию от среды, в сознании человека формируются соответствующие представления и критерии о предметах, явлениях, качествах, действиях. Отклонения от этих представлений воспринимаются как нечто необычное. Чем больше отклонения, тем сильнее оставленное ими впечатление, иначе говоря, чувство удивления—от слабого до потрясающего.

Удивление выражается посредством вербального и кинестического языков. Здесь нас интересует последний.

Синонимический ряд кинем мы делим на группы, каждая из которых возникла как следствие определенной формы поведения человека. В статье предложено пять таких форм. 1. Поднимание жестикулирующего с места (первоначальной причиной поведения субъекта было желание поудобней или поближе пообщаться с источником информации). Свое удивление он выражает следующими четырьмя кинемами. В положении лежа от удивления а) приподнимается на локти, б) садится. Из положения сидя а) вскакивает на ноги, б) встает на ноги. 2. Осторожность. Субъект реагирует тремя кинемами: а) пятится назад, б) часто мигает глазами, в) крестится. 3. Отталкивание от себя, удаление. Субъект реагирует тремя кинемами: а) разводит руками, б) пожимает плечами, в) качает головой. 4. Действия, направленные на себя. В зависимости от способа воздействия мы можем указать четыре подгруппы. В одном случае действие совершается с помощью удара: а) бить руками по коленям, б) бить руками по бедру, а) бить рукой по лбу, г) бить рукой об руку. В другом случае кинемы: а) кусать губу, б) кусать палец. В третьем случае щипать щеки, в четвертом—скользить (царапать) пальцами по щекам и челюсти.

5. Сосредоточение. Эту группу делим на две: позитивную и мимическую. Субъект от удивления может принимать следующие позы: стоять неподвижно, положить ладонь на губы, прижать кулаки ко рту, взяться за челюсть. При мимическом проявлении удивления встречаются четыре кинемы: лицо вытягивается, широко открывается рот, поднимаются брови, широко раскрываются глаза.